

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ապադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ապադեմիա) ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդների առաջադրման, ռեկտորի ընտրության կազմակերպման և անցկացման, ռեկտորի նշանակման և նրա հետ աշխատանքային պայմանագրի կնքման կարգը:

2. Ապադեմիայի ռեկտորի ընտրության կանոնակարգը, Ապադեմիայի կանոնադրությանը համապատասխան, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում ու հաստատում է Ապադեմիայի կոլեգիալ կառավարման մարմինը (այսուհետ՝ Խորհուրդ):

3. Ապադեմիայի ռեկտորի ընտրությունների կազմակերպման ծախսերը կատարվում են Ապադեմիայի միջոցների հաշվին:

2. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՄՐՑՈՒՅԹ

ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

4. Ապադեմիայի ռեկտորի թափուր պաշտոն առաջանալու դեպքում լիազորված պետական մարմինը, ի դեմս Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ լիազորված պետական մարմին), հայտարարում է բաց մրցույթ:

5. Մրցույթի անցկացումից առնվազն 30 օր առաջ զանգվածային լրատվության այլ միջոցներով (հանրապետական կամ տեղական ռադիո, հեռուստատեսություն, մամուլ), ինչպես նաև համացանցում (Ապադեմիայի պաշտոնական կայքում) մրցույթի մասին հայտարարություն է հրապարակվում, որտեղ զետեղվում է սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված տեղեկությունը: Հայտարարությունը

հրապարակվում է հնգօրյա պարբերականությամբ՝ առնվազն երկու անգամ:
Հրապարակման գործընթացը կազմակերպում է Ակադեմիայի խորհրդի նախագահը:

6. Ռեկտորի թափուր պաշտոնի համար բաց մրցույթ անցկացնելու մասին լիազորված պետական մարմնի հայտարարության տեքստում պարտադիր է նշել՝

1) մրցույթին մասնակցելու համար դիմումների ընդունման վայրը և ժամկետը, որը չի կարող մրցույթ անցկացնելու մասին վերջին հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ մեկ ամսից պակաս լինել,

2) մրցույթի անցկացման վայրը, օրը և ժամը,

3) մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (նյութերը)՝ սույն կանոնակարգի 7-րդ կետին համապատասխան,

4) հավակնորդին ներկայացվող պահանջները (չափանիշները)՝ սույն կանոնակարգի 17-րդ կետին համապատասխան:

7. Մրցույթին մասնակցելու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը (նյութերը)՝

1) դիմում,

2) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի,

3) քաղվածք աշխատանքային գրքույկից,

4) ինքնակենսագրություն,

5) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

6) գիտական աստիճանը և գիտական կոչումը հավաստող փաստաթղթերի պատճենները,

7) կադրերի հաշվառման անձնական թերթիկ (լրացված),

8) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից,

9) հրատարակված հոդվածների ցանկ,

10) բնութագիր վերջին աշխատավայրից (եթե այն չի լուծարվել),

11) Ակադեմիայի զարգացման և բարեփոխման հայեցակարգ (գործունեության ծրագիր)՝ փակ և կնքված փաթեթով, որը բացվում է հայտերի ընդունման վերջնաժամկետից հետո:

8. Ակադեմիայի ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի հանձնումն ավարտվում է մրցույթի անցկացումից 10 օր առաջ:

9. Հավակնորդների՝ օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերն ընդունելու նպատակով Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչությունը վարում է համարակալված և կնքված մատյան՝ մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալները գրանցելու համար:

10. Մատյանում նշվում են մրցույթին մասնակցելու համար դիմած յուրաքանչյուր քաղաքացու անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, անձնագրի համարը և սերիան, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի էջերի թիվը: Մատյանի լրացված էջը կնքվում և փակվում է յուրաքանչյուր օրվա ավարտին:

11. Քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով: Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչությունը սույն կանոնակարգի 7-րդ կետում նշված փաստաթղթերի պատճենները համեմատում է բնօրինակների հետ և ընդունում դրանք, իսկ բնօրինակները վերադարձնում է քաղաքացուն:

Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչությունը կատարում է հանձնումը հավաստող նշագրում փաստաթղթերի՝ հավակնորդի օրինակի վրա:

12. Հայտերն ընդունելիս Վարչապետի աշխատակազմի կադրերի և անձնակազմի կառավարման վարչությունը պարտավոր է ստուգել հայտի համապատասխանությունը սույն կանոնակարգի 7-րդ կետով ներկայացվող պահանջներին:

Փաստաթղթերի թերի լինելու դեպքում հավակնորդը տեղեկացվում է այդ մասին նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ մեկ օրվա ընթացքում, պատվիրված նամակով՝ հանձնման մասին հետադարձ ծանուցմամբ, հնարավորության դեպքում՝ նաև հեռախոսազանգով: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:

13. Ակադեմիայի ռեկտորի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (համարակալված և յուրաքանչյուր էջի հետնամասում ստորագրված) հանձնվում են Խորհրդի քարտուղարին:

14. Հայտերի ընդունումն ավարտվելու հաջորդ օրը Խորհրդի քարտուղարը կից գրությամբ մրցույթին մասնակցելու համար դիմում ներկայացրած յուրաքանչյուր

քաղաքացուն վերաբերող փաստաթղթերի փաթեթը (համարակալված, կարված և կնքված) ներկայացնում է Խորհրդի նախագահին:

Խորհրդի նախագահը մրցույթի անցկացումից առնվազն մեկ շաբաթ առաջ՝

1) Խորհրդի անդամներին է ուղարկում յուրաքանչյուր հավակնորդի ներկայացրած փաստաթղթերի պատճենները.

2) կազմակերպում է հավակնորդների անվան և ազգանվան, գիտական աստիճանի և գիտական կոչման, զբաղեցրած պաշտոնի, ինչպես նաև առաջադրման եղանակի վերաբերյալ տեղեկատվության տարածում Ակադեմիայում (Ակադեմիայի ինտերնետային կայքում, հայտարարությունների համար նախատեսված վայրում և այլն):

3. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ (ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ)

15. Ակադեմիայի ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդներն առաջադրվում են ինքնառաջադրմամբ կամ Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից:

16. Ակադեմիայի ռեկտորի մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

17. Ակադեմիայի ռեկտորի պաշտոնի համար կարող է առաջադրվել այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթության բնագավառի առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, առնվազն գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և առնվազն դոցենտի գիտական կոչում:

4. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

18. Ակադեմիայի ռեկտորի ընտրության համար անցկացվող Խորհրդի նիստը նախապատրաստում և ղեկավարում է Խորհրդի նախագահը: Ակադեմիայի ռեկտորի ընտրության նիստը դռնփակ է (բացառություն է արվում ռեկտորի պաշտոնի՝ Ակադեմիայի Խորհրդի անդամ չհանդիսացող հավակնորդների համար):

19. Ակադեմիայի ռեկտորի ընտրության համար անցկացվող Խորհրդի նիստի օրակարգը հետևյալն է.

1) հավակնորդների՝ սույն կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,

2) Ակադեմիայի զարգացման և բարեփոխման վերաբերյալ հավակնորդների մշակած հայեցակարգերի (գործունեության ծրագրեր) ներկայացում,

3) հավակնորդներին հարցերի ներկայացում և Խորհրդի անդամների ելույթներ,

4) հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,

5) գաղտնի քվեարկություն Ակադեմիայի ռեկտոր ընտրելու նպատակով,

6) Ակադեմիայի ռեկտորի ընտրության արդյունքների մասին որոշման կայացում:

20. Ակադեմիայի Խորհրդի նիստը համարվում է իրավազոր Խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցության դեպքում:

21. Բացառությամբ սույն կանոնակարգի 23-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որոշման, Խորհրդի մյուս որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

22. Ռեկտորի պաշտոնի հավակնորդը մասնակցում է Խորհրդի նիստին, սակայն նրա բացակայությունը հիմք չէ հավակնորդի թեկնածությունը քննարկումից կամ քվեարկությունից հանելու համար՝ բացառությամբ գրավոր ինքնաբացարկ հայտնելու դեպքերի:

23. Խորհրդի նախագահը նիստը վարում է հետևյալ կարգով.

1) Խորհրդի քարտուղարը զեկուցում է ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդների՝ սույն կանոնակարգի պահանջները բավարարելու հարցը: Հարցի ներկայացումից հետո Խորհրդի քարտուղարը պատասխանում է առաջացած հարցերին:

2) Խորհրդի ցանկացած անդամ կարող է առաջարկ ներկայացնել ռեկտորի թափուր պաշտոնի հավակնորդին ցուցակից հանելու վերաբերյալ՝ հիմնավորելով, թե սույն կանոնակարգի որ պահանջներն են խախտված: Հավակնորդին ցուցակից հանելու առաջարկը Խորհրդի նախագահի կողմից դրվում է քվեարկության: Հավակնորդը հանվում է ցուցակից, եթե առաջարկին կողմ է քվեարկել նիստին ներկա անդամների առնվազն երկու երրորդը:

3) Խորհրդի նախագահը ծրագրային ելույթների համար, ըստ ազգանունների այբբենական կարգի, ձայն է տալիս հավակնորդներին, որպես կանոն, 10 րոպե տևողությամբ:

4) Յուրաքանչյուր հավակնորդի ելույթից հետո Խորհրդի նախագահը հայտարարում է հարցերի հերթագրում, որից հետո Խորհրդի հերթագրված անդամները, ըստ հերթագրման հերթականության, ստանում են հավակնորդին հարց տալու հնարավորություն: Հարցի տևողությունը չպետք է գերազանցի երկու րոպեն: Պատասխանը պետք է լինի հակիրճ: Հավակնորդին տրվող հարցերը կարող են վերաբերել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին և ծրագրային ելույթին:

5) Առաջին հերթագրման արդյունքում տրված հարցերին հավակնորդի պատասխանելուց հետո Խորհրդի նախագահը, ըստ անհրաժեշտության, հայտարարում է հարցերի 2-րդ հերթագրում՝ սույն կանոնակարգով նախատեսված կարգով:

6) Բոլոր հավակնորդներին ուղղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո սկսվում է քննարկում: Քննարկումների ընթացքում Խորհրդի անդամների ելույթները պետք է լինեն մինչև 10 րոպե տևողությամբ: Ելույթ ունեցողներին հարցեր չեն տրվում:

24. Խորհրդի նիստերն ընդմիջվում են Խորհրդի որոշմամբ:

25. Եթե գաղտնի քվեարկությունը չի սկսվել մինչև ժամը 18:00-ը, նիստն ընդմիջվում է մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 9:00-ը: Եթե գաղտնի քվեարկությունը սկսվել է, ապա նիստը շարունակվում է մինչև քվեարկության ավարտը և ընտրության արդյունքների մասին որոշման կայացումը:

5. ԱՎԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՅՈՒՄԸ

26. Խորհրդի նիստում քննարկումներից հետո Խորհրդի նախագահը, ըստ ազգանունների այբբենական կարգի, հրապարակում է հավակնորդների անուն-ազգանունները: Եթե վերջիններս իրենց անուն-ազգանունը հրապարակելու պահին ինքնաբացարկ չեն հայտնում, ապա նրանց թեկնածությունը ներառվում է քվեաթերթիկում:

27. Խորհրդի նախագահը ներկայացնում է գաղտնի քվեարկության կարգը:

28. Խորհուրդն իր կազմից ընտրում է առնվազն երեք անդամից կազմված հաշվիչ հանձնաժողով:

29. Հաշվիչ հանձնաժողովը՝

1) կազմակերպում և անցկացնում է քվեարկությունը,

2) կազմում է Ակադեմիայի ռեկտորի ընտրության արդյունքների ամփոփիչ արձանագրություն (երկու օրինակից),

3) հրապարակում է Ակադեմիայի ռեկտորի ընտրության քվեարկության արդյունքները:

30. Հաշվիչ հանձնաժողովի անդամների թեկնածություններն առաջադրում են Խորհրդի անդամները՝ Խորհրդի կազմից:

Հավակնորդ հանդիսացող Խորհրդի անդամները չեն կարող լինել հաշվիչ հանձնաժողովի անդամ կամ առաջադրել թեկնածուներ: Յուրաքանչյուր անդամի առաջադրումից հետո կազմակերպվում է քվեարկություն: Առաջադրումներն ու քվեարկությունները շարունակվում են մինչև հանձնաժողովի կազմի համալրումը:

31. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հաշվիչ հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

32. Ակադեմիայի ռեկտորի ընտրության քվեաթերթիկները ստորագրվում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

33. Մեկից ավելի հավակնորդների քվեարկության դեպքում քվեաթերթիկում այբբենական կարգով նշվում են հավակնորդների անուն-ազգանունները, որոնց դիմաց առկա է վանդակ՝ նշում կատարելու համար: Քվեաթերթիկը պարունակում է նաև «բոլորին դեմ եմ» գրառումով վանդակ (*Ձև N 1*): Մեկ հավակնորդի դեպքում քվեաթերթիկում նշվում են հավակնորդի անուն-ազգանունը և «կողմ» կամ «դեմ» բառերը (*Ձև N 2*):

34. Խորհրդի անդամը հաշվիչ հանձնաժողովից քվեաթերթիկ ստանալիս ցուցակում ստորագրում է իր անուն-ազգանվան դիմաց:

35. Խորհրդի անդամը քվեարկության ժամանակ ունի միայն մեկ ձայնի իրավունք: Քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում:

36. Խորհրդի անդամը քվեաթերթիկում նշում է կատարում իր նախընտրած հավակնորդի անուն-ազգանվան դիմաց առկա վանդակում հետևյալ կերպ՝ **V**: Եթե նա

դեմ է բոլոր հավակնորդներին, ապա նշում է կատարում «բոլորին դեմ եմ» գրառմամբ վանդակում: Մեկ հավակնորդի դեպքում ընտրողը նշում է կատարում «կողմ» կամ «դեմ» գրառումներով վանդակներից միայն մեկում:

37. Քվեարկության ավարտից հետո հանձնաժողովի նախագահը տեսանելի վայրում բացում է քվեատուփը, մեկ առ մեկ հանում քվեաթերթիկները, հայտարարում քվեարկության արդյունքը և փոխանցում հանձնաժողովի անդամներին՝ տեսակավորելու համար: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ, մինչև քվեատուփից հաջորդ քվեաթերթիկը հանելը, կարող է պահանջել քվեարկության դնել քվեաթերթիկն անվավեր ճանաչելու հարցը:

38. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն կանոնակարգի 36-րդ կետի պահանջներին կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում: Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումն ընդունվում է հաշվիչ հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

39. Հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (*Ձև N 3*):

Արձանագրության մեջ նշվում է՝

1) քվեաթերթիկ ստացածների թիվը (ըստ ցուցակի ստորագրությունների),

2) քվեատուփում առկա քվեաթերթիկների ընդհանուր թիվը,

3) անվավեր քվեաթերթիկների թիվը,

4) հավակնորդների (հավակնորդի) ազգանունները (ազգանունը) և յուրաքանչյուրի ստացած ձայների թիվը,

5) «բոլորին դեմ» (մեկից ավելի հավակնորդների դեպքում) տրված ձայները:

40. Արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի բոլոր անդամները: Մեկից ավելի հավակնորդների դեպքում արձանագրության մեջ հավակնորդների ցուցակը տրվում է ըստ հավաքած «կողմ» ձայների քանակի նվազման հաջորդականության:

41. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը Խորհրդի նիստում հրապարակում է քվեարկության արդյունքները: Քվեարկության ընթացքի կամ քվեաթերթիկները հաշվելու ընթացքի վերաբերյալ հանձնաժողովի՝ առարկություն ունեցող անդամը քվեարկության արդյունքները ներկայացնելուց հետո կարող է Խորհրդին

ներկայացնել գրավոր շարադրած հատուկ կարծիք: Խորհուրդը բաց քվեարկությամբ իր վերաբերմունքն է արտահայտում ներկայացված բոլոր հատուկ կարծիքների վերաբերյալ:

42. Քվեարկության արդյունքների հիման վրա Խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

- 1) Ակադեմիայի ռեկտոր ընտրվելու մասին.
- 2) քվեարկության երկրորդ փուլ անցկացնելու մասին.
- 3) ընտրությունը չկայացած ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին,
- 4) ընտրությունն անվավեր ճանաչելու և ռեկտոր չընտրվելու մասին:

43. Ակադեմիայի ռեկտորի պաշտոնում ընտրված է համարվում այն հավակնորդը, որը հավաքել է Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությունը:

44. Քվեարկության արդյունքում ընտրությունը համարվում է չկայացած, եթե քվեարկված միակ հավակնորդը չի ստացել ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ, կամ եթե քվեարկվել է երկու և ավելի հավակնորդ, և նրանցից առավել ձայներ ստացած երկու հավակնորդները միասին չեն հավաքել Խորհրդի ընդհանուր թվի ձայների կեսից ավելին:

45. Քվեարկության երկրորդ փուլ նույն նիստում անցկացվում է, եթե քվեարկվել է երկուսից ավելի հավակնորդ, և նրանցից ոչ մեկը չի ստացել անհրաժեշտ թվով ձայներ: Այս դեպքում երկրորդ փուլ են անցնում առավել ձայներ հավաքած երկու հավակնորդները, եթե նրանք միասին հավաքել են Խորհրդի ընդհանուր թվի ձայների կեսից ավելին, իսկ երկրորդ հավակնորդի ձայներին հավասար թվով ձայներ հավաքած այլ հավակնորդների առկայության դեպքում՝ նաև այդ հավակնորդները:

46. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքների հիման վրա Խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը.

- 1) Ակադեմիայի ռեկտոր ընտրվելու մասին.
- 2) ընտրությունը չկայացած ճանաչելու և նոր ընտրություն նշանակելու մասին.
- 3) ընտրությունն անվավեր ճանաչելու և նոր ընտրություն նշանակելու մասին:

47. Երկրորդ փուլի քվեարկության արդյունքում ընտրությունը ճանաչվում է չկայացած, եթե քվեարկված հավակնորդները միասին չեն հավաքել Խորհրդի ընդհանուր թվի ձայների կեսից ավելին:

48. Ակադեմիայի ռեկտորի ընտրության արդյունքը ձևակերպվում է Խորհրդի որոշման տեսքով, որը ստորագրում է Խորհրդի նախագահը: Որոշման մեկ օրինակը Խորհրդի նախագահը կից գրությամբ ներկայացնում է լիազորված պետական մարմին՝ հաստատման համար:

49. Ընտրությունները լիազորված պետական մարմնի կամ Խորհրդի կողմից ճանաչվում են անվավեր, եթե ընթանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Ակադեմիայի կանոնադրության կամ սույն կանոնակարգի էական խախտումներով: Ընտրություններն անվավեր ճանաչվելու դեպքում լիազորված պետական մարմինը հայտարարում է նոր մրցույթ:

Սույն կետի իմաստով էական խախտում է համարվում փաստարկված այն կոնկրետ խախտումը, որն էական ազդեցություն է ունեցել Ակադեմիայի ռեկտորի ընտրության արդյունքի վրա:

50. Ընտրությունների կանոնակարգի խախտումները և մրցույթի արդյունքները կարող են բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

51. Ակադեմիայի ռեկտորի ընտրական գործընթացն արտացոլող բոլոր փաստաթղթերը, Խորհրդի նիստի արձանագրության հետ միասին, պահվում են Ակադեմիայում: Մրցույթի արդյունքների ամփոփումից հետո մրցույթին առնչվող բոլոր փաստաթղթերն ամրակարվում, պահպանվում և արխիվացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա»
պետական ոչ առևտրային կազմակերպության

Խորհրդի _____ թվականի թիվ _____ նիստում ռեկտորի
ամսաթիվ, տարեթիվ համար
ընտրության գաղտնի քվեարկության

1.	
2.	
3.	
ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ	

* Որևէ հավակնորդին կողմ կամ բոլորին դեմ լինելու դեպքում քվեաթերթիկում նշում է կատարվում համապատասխան տողի վանդակում: Նշումը կատարվում է միայն «V» ձևի նշանով:

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա»
պետական ոչ առևտրային կազմակերպության

Խորհրդի _____ թվականի թիվ _____ նիստում ռեկտորի
ամսաթիվ, տարեթիվ համար
ընտրության գաղտնի քվեարկության

ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ Կողմ Դեմ

* Հավակնորդին կողմ կամ դեմ լինելու դեպքում քվեաթերթիկում նշում է կատարվում համապատասխան վանդակում: Նշումը կատարվում է միայն «V» ձևի նշանով:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվիչ հանձնաժողովի նիստի

Հաշվիչ հանձնաժողովն ընտրվել է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման սկադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի « ____ » _____ թ. նիստում

(օրը, ամիսը, տարին)

(արձանագրություն թիվ ____) հետևյալ կազմով՝

1. _____ (նախագահ),
2. _____ (քարտուղար),
3. _____,
4. _____,
5. _____:

Ակադեմիայի խորհրդի 20 անդամից ներկա էին ____-ը:

Քվեարկվել է Ակադեմիայի ռեկտորի թեկնածությունը:

Քվեարկությանը մասնակցել է Ակադեմիայի խորհրդի ____ անդամ:

Բաժանվել է ____ քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է ____ քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքներն են՝

Միակ հավակնորդի դեպքում

ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱԿԵՐ

Մեկից ավելի հավակնորդների դեպքում

ՀԱՎԱԿՆՈՐԴԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ	ԱՆՎԱԿԵՐ

Անվավեր քվեաթերթիկների քանակը՝ _____:

Գաղտնի քվեարկության արդյունքներով _____ - ը
(ազգանուն, անուն)

ընտրված է «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավար:

Կամ՝

Գաղտնի քվեարկության արդյունքներով «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ղեկավարի ընտրությունը համարվում է չկայացած:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝

(ստորագրություն)

(ազգանուն, անուն)

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____,
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

2. _____,
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

3. _____,
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

4. _____:
(ստորագրություն) (ազգանուն, անուն)